

50 հարկ

ՄԷՃՄՈՒՄԻ ԱՆՊԱՐ

50 հարկ

DIRECTION DU JOURNAL MEDJMOUA-T-AHBAZ 65, Grand'rue de Péra, Taksim, 65	ԱՊՐԵՆԻ ԶԵՆՈՒԹԻՄԱՐԸ Խոսքի լեզու Քառեր Մեծագույն լեզու Զեյթուն Զեյթուն Զեյթուն	ՍԵՆՏԵՆՆԵՐԻ ԶԵՆՈՒԹԻՄԱՐԸ Խոսքի լեզու Քառեր Մեծագույն լեզու Զեյթուն Զեյթուն Զեյթուն	ՉԱՐՇԵՆՊԻՆԷ ԿԻՆԵՄԱՏԵՐԻ ՆԵՐՈՒՆՈՒՄ Խոսքի լեզու Քառեր Մեծագույն լեզու Զեյթուն Զեյթուն Զեյթուն	مجموعه اخبار بک اوغلی تقسیم جاده سی نوسم
---	--	--	--	---

Ս. ԲԱՆԱՆԱՅԱՊԵՏՆ

ԱՐԴԻՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

2.

Ս. Բանանայապետին վերջին Շրջաբե-
րականն որ մարդկային մտածութեան հը-
զօր գլուխ-գործոց մէջ՝ ընդհանուր հիաց-
մամբ կարգադրուեցաւ ո՛չ միայն կաթու-
ղիկէներու կողմանէ, այլ և նոյն իսկ ալ-
կաթնոն գիտնոց կողմանէ որք լուրջ ու
անխախտապաշար մտօք ուսումնասիրեցին
այդ անմահ վաւերագիրն:

Անշուշտ ուրախութիւն է այս, բայց
բան մը կայ դեռ շատ աւելի ուրախա-
ւորի, այն է թէ ամբողջ կաթուղիկէ աշ-
խարհին մէջ շտեմնուեցաւ մի միակ նպիս-
կապ ուր համամիտ գտնուի Արդիական-
նաց: Ո՛րքա՛ն և մեծ եղած լինի ցարդ ե-
պիսկոպոսաց ուսանց համակրութիւնն ար-
դի գաղափարաց նկատմամբ, անոնք որ
ամենէն աւելի յառաջացաւ կ'երեւէին՝
առաջիններն եղան գաղափար Պիտո Ժ. Ի հե-
ռատեցութիւնն և իմաստասիրութիւնն և
դատաւարութիւնն նոր Դպրոցին յախուռն
ընթացին և աւելի ծայրայեղութիւններ:

Գալով քահանայից՝ դժբախտաբար տե-
սարանը կը փոխուի և գրեթէ մեղմանալ-
ձոտ դոյն մը կ'ըզենու: Հայր ժօրձ Թի-
ռէլ յիշգրտաւ Տէր Լուսաֆի ի Ֆրանսա
և իրենց մի քանի ընկերք՝ բաւական վե-
հանձնութիւն և ոգի գործողութեան չին
ցուցներ Հռոմով բարձրագոյն վճիռներուն
առջեւ: Մեք և մեզ հետ անթիւ կաթու-
ղիկէներ այնպէս կը կարծենք թէ Արդիա-
կանաց շատերը պարկեշտ ու պարտաճա-
նայ հանձնք են, որոց միտքը թէպէտ պահ
մը մոլորութեան ամպերով պաշարուած՝
բայց սիրտն ազատ մնացած է յաւատ մո-
լութեան անպատուիչ շղթայներէն: Ուս-
տի և կ'ենթադրենք և կը յուսանք որ
բազումք իմաստութեամբ և օրինակելի
խոնարհութեամբ յետո պիտի կոչեն իրենց
սխալներն ու պիտի ապացուցանեն հան-
դիսաւորապէս թէ իրենց բոլոր խօսքի ու
գործածոց մէջ ո՛չ թէ անձնասիրութիւն
կամ շահ կը փնտռէին, այլ միայն և մի-
այն Աստուծոյ փառքն, Հաւատոյ յաղթա-
նակն և հոգեւոր փրկութիւնը:

Իսկ անոնց որք չափազանց ինքնավը-
տահութեամբ փրցեցաւ՝ Բանանայապետա-
կան Շարժաբեականին դէմ առաքիլու-
թիւններ չեն խնայեր, կը համաձայնեց
պատասխանել:

Ա. Կ'ըսէք թէ «Ս. Պապը չճանչնար
իւր դարն»: — Ինչո՞ւ: Հաւանականօրէն
վասն զի դատաւարութեց զձեզ, Նիքի թոյլ
տար որ ձեր քմաց համեմատ նոր կրօնք
մը հնարէիք, — իբրեւ թէ արդէն եղած-
ները չեն բաւեր, — այն ատեն անշուշտ
բոլոր ձեր խռնկերը պիտի ծիւծիւք իրեն
առջեւ: Բայց նա ո՛չ ձեր և ո՛չ այլոց
գովեստից չկարօտիր բնաւ: Իւր գովեստն
ու փառքն է իրեն յանձնուած ճշմարտու-
թեանց սրբաշուք աւանդն անվիճար ու
անալալ պահել ցվերջ, և նախատինք ու
թշնամանք կրել զիմակաւոր ու անդիմակ
ընթացներէ՝ իւր քրիստոսաւոր և դիւ-
ցազնաշուք հաւատարմութեան համար:

Բաց աստի քանի որ Արդիականութիւնը
մեր ժամանակին ամենէն բազմադէտ և
չարաչուք վտանգներէն էր, զայն այն-
չափ պայծառապէս մատնանիչ ընելով ու
այնքան շքեղօրէն դատաւարեցով՝ ա-
պացոյց թէ իւր դարը ճանչցած է և քաջ
ճանչցած:

Բ. Կ'ըսէք թէ «Կը մերժէ գիտու-
թիւնը»: — Ո՛չ երբեք, Գիտութիւնն և
ճշմարտութիւնն երկու անբաժան քոյրեր
են: Ո՛վ որ ճշմարտութիւնը կը պաշտա-
նէ՝ նոյնի գործով (ipso facto) գիտութեան
ալ կուսակից է: Ամեն ճշմարտութիւն մէջ գի-
տութեան առաջին և վերջին նպատակն է
ճշմարտութեան հասնիլ: Շատ տխուր բան
մը պիտի լինէր այն գիտութիւնը — (և
անարժան իսկ սոյն վեհ անուան) — որ
չիմարէր և չիմարէր ճշմարտութեան: Ամեն
անգամ որ գիտութիւնը չքայլեր ճշմար-
տութեան համընթաց, սոցոց խաղաղք մ'է
կամ սին ու անճշակ կատակերգութիւն
մը և ո՛չ այլ ինչ, Արդարեւ: Ի՞նչ կ'արժէ
Ուսողութեան գիտութիւնն, երբ մարթե-
մադեքական ճշմարտութեանց չյանգիր-
ի՞նչ կ'արժէ պատմութեան գիտութիւնն,
երբ պատմական ճշմարտութեանց դէմ կը
կուռի: Ի՞նչ կ'արժէ Իմաստասիրութեան
գիտութիւնն մը՝ որ փոխանակ փիլիսոփա-
յական ճշմարտութեանց առաջնորդելու՝
բնազանցական սուտեր կը դարձնէ, ի՞նչ
կ'արժէ աստուածաբանութեան գիտութիւնն
մը՝ որ հեռի աստուածաբանական ճշմար-
տութիւններն յարգելէ՝ կրօնային մոլորու-
թեանց և հոգեպաշտ աղանդներու թիւն
կը բազմապատկէ: Բաց աստի հեռաւոր
Բանանայապետն իւր թշնամեաց այս գէշքն
իրենց ձեռք մէջ խորտակած է կանխաւ,
որոշելով որ գիտուն կաթուղիկէներու նոր
կաճառ մը հաստատուի գիտական ալիւսայ
խնդիրներով զբաղելու համար:

Գ. Կ'ըսէք թէ «Ձեկեղեցին կը տկա-
րացնէ իւր ջատագովները պակեցներով և
նոր յաղթանակներէ հրժարելով»: — Ե-
կեղեցին մոլորեալ և մոլորեցուցիչ ջատա-
գովներու պէտք չունի բնաւ: Ո՛վ որ օ-
րինաւոր միջոցներով կը պաշտպանէ կը-
րօնքը, Եկեղեցին կ'ընդունի և կ'օրհնէ
զայն: Բայց ապօրէն միջոցներ կը մերժէ
միշտ, նախ ի նկատի ունելով իւր գերը-
նական ծագումն և իւր բարոյականի վեհ-
մութիւնն, և յետոյ քաջ գիտելով թէ
վերիպանաց և սոցոյ յաղթանակներն ո՛չ
հաստատուն են և ո՛չ տեւական: Ո՛րքա՛ն
որ Եկեղեցին ներքին բարեկարգութեամբ
փայլի, այնչափ իւր արտաքին պայծա-
ռութիւնն օր քան զօր կ'աճի: Ընդհակա-
ռակն ինչ որ զայն ներքնապէս կը տկա-
րացնէ, իսկոյն իւր տխուր հակահարուածն
զգալի կ'ընէ շատ հեռուներն իսկ, Եկե-
ղեցոյ ոգւով տոգորեալ և Աւանդական
Ջատագովութեան յարգող Ուսուցիչով
Ափրիկէի, Հնդկաստանի, Ուվկէանիոյ,
Էջն, անասաններ կրկններուն մէջ սփռե-
ցին և կը սփռեն ամեն օր Աւետարանի
լոյսն կենսայորդ, և Եւրոպիոյ և Ամերի-
կայի մէջ ամենէն ուսեալ ու զարգացեալ
միտքերն կ'առաջնորդեն ի ծոց Ս. Եկե-
ղեցոյ: Ո՛ւր են Արդիականութեան փա-
ռաւոր պտուղներն: Կր ճանչցուին անոնք
որ այս չարաշուք վարդապետութեան խա-
ւարդուտ մըրկին մէջ հաւատոյ ջանք չի-
ջուցին, բայց ո՛ր տեսած է և ո՛ր են մե-

ծախսոյ Դպրոցին հոգեւոր աշխարհակալու-
թիւններն: — Ափսո՛ս...:

Դ. «Շրջաբեականն աններող է»: —
Այո՛, ինչպէս աններող է Ս. Աւետարանն.
«Որ հաւատայ...», ո՛չ դատաւարութեցի.
և որ ո՛չ հաւատայ...», արդէն իսկ դա-
տաւարութեալ է» (Ս. Յովն., Գ. 18.)
Եկեղեցին երբեք խաւարը լուսոյ հետ,
սատանն Աստուծոյ հետ հաշտեցնելու յա-
ւակնութիւնն չէ՝ ունեցած: Այսպիսի մե-
ծագործ ձեռնարկ մը ցնորասէրներու (uto-
pistes) կը թողու: Նա: Աններող է Եկեղե-
ցին ինչպէս աններող է ամեն գիտութիւն
իւր սահմանին մէջ: Առանց իմաստուն և
օրինաւոր աններողութեան կարելի չէ ո՛չ
գիտութիւն, ո՛չ բարոյական և ո՛չ կրօնք:
Աւելորդ է ըսել թէ կը հաստատում Եկե-
ղեցոյ աններողութիւնն ընդդէմ մոլորու-
թեանց, և ո՛չ ընդդէմ անձանց. սոցա մա-
սին իւր մարմնի սէրն ու ներողութիւն
այն աստիճան սոռոյգ է որ նոյն իսկ բու-
ղիքական Պ. Կլաւտոն այս անմոռանալի
վկայութիւնը տուաւ մի օր ի լուր քաղա-
քակրթ աշխարհի. «Պատմութիւնը գի-
տեմ են, և զձեզ կ'ապահովեն մը որ Հռոմ-
մէական Եկեղեցիէն աւելի քաղցր, աւելի
մայրական և աւելի ներող Եկեղեցի չեմ
գտած» (*):

Ն. Յ. Վ. Փ.

ՉԱՐՇԵՆՊԻՆԷ ՄԵՆ ԱՌԹԻՒՆ

Յովսէփ Սամահգեանի

Ոսկերեանին դուռը բաց էր. զորքեր
փուռած էին մինչեւ ներս:

Հարմիրք մը կար:
Հետաքրքիր դեգերողի թափառայած
քայլերն սպրդեցողից դրան բացուածքէն:
Դպրոցական վաղեմի ընկեր մըն էր որ
կ'ամուսնանար, ընկեր մը զոր կարճ բան-
դալնով ճանչցած էի և որուն հետ Տէր-
մաք սերտած էինք — «Calypso ne pouvait
se consoler du départ d'Ulysse...», — և
հետք պիլիա խաղացած:

Ու հիմա անիկա՝ սեւազգեստ՝ Ս. Խո-
րանին առջեւ գլխահակ, երկնաւոր Տիրոջ
օրհնութիւնները կ'ստանար՝ իր կեանքը
կապելու համար նազելիօրէն փափուկ ու
հրապուրիչօրէն շնորհակալ Սրբորդին հետ,
որ շուշանային ճերմակութիւններու մէջ
կը կայնէր իր քովը, նման վարդապետնիկ
մը ծայրը տրոփող կոկոնի մը, մինչ Դասին
առաջը տողուն հայրը ակնոցը յաճախ կը
հանէր քիթէն՝ սրբելու համար արցունք-
ները — ուրախութեան՝ անշուշտ:

Կեանքի արագան մէջ խորհուրդը կը
կատարուէր:

Բազմութեան մէջ՝ մեր նախկին ուսու-
ցիչը, քիչ մը ծերացած և տակաւ քիչ մը
ալեհեր, կը դիտէր մտածկոտ: Ժամուն
մէջ հոս հոն նախկին դպրոցական ընկեր-
ներ, ժամանակին գոզնոցով ու կարճ գուլ-
պաներով ճանչցուած, հիմա պիտի, մօ-
րուքով բոլորն ալ:

Ու այս տեսարանը, իր խորհրդաւոր
զուարթութեան մէջ, միտքս բերաւ կեանք-
քի զարմանալիութիւնը ու հիմնական փո-

(*) Ծանօթ Կլաւտոնի՝ Անգլիական Խոր-
հրդարանին մէջ 1828ին:

փոխութիւնները որոնք կը կատարուին
հոն՝ վարկենական գրեթէ:

Նրէկ՝ դպրոցական, այսօր՝ ամուսնա-
ցած, վաղը՝ մեծ-հայր:

Ու կեանքը կը սահի, կը սահի...

Միայն այդ կեանքին մէջ պէտք է բան
մը ընել, անուշ հետք մը ձգելու համար
հոն, որպէս զի վաղը կեանքը շատ ա-
պուշ չգտնես և օրերդ՝ խիստ տափակ:

Ընտանիք, այս բառին մէջ բովանդակ-
ուած երջանկութիւնը՝ ուրիշ ի՞նչ բանաս-
տեղծութիւն, ուրիշ ի՞նչ իմաստասիրու-
թիւն կրնայ արտայայտել:

Ու բոլոր այն անկեղծ բաները զորս
չկրցայ ըսել շնորհաւորութեանց պայմա-
նադրական ձեռքի սեղմումներուն մէջ՝
ընդունելութեան հիւրասրահը, ուր պօն-
պօններու և էլիքներու աղմուկը կը
խառնուէր քրքիշներու և խօսուքներու-
ներու, հիմա կ'ուղղեմ հասցէիդ՝ իւր խօս-
քերը հին դպրոցական ընկերի մը, որ այս
առթիւ ձեռքը կը սեղմէ ջերմագին:

Բարեկամս, շատ աղէկ ըրիր կարգուե-
լով, որովհետեւ ամուսնութիւնը միակ ե-
ղանակն է սրբացնելու կեանքը աշխարհա-
կանի մը որ ենթարկուած է մարդկային
զճուճ տաղտուկներու:

Գաւառային կեանքի մէջ, զօր պար-
տաւորուած էիր ապրիլ ասպնդիցիդ սի-
րոյն և ապագայ շտկելու համար, հայ-
րիկէն, մայրիկէն, ճղբայրներէն հեռու, մե-
նութեան ձանձրախտը ճնշեց կոնակիդ և
փնտռեցիր սիրուած էակ մը, որուն մտեր-
մութեան մէջ կարենայիր տոկալ՝ անցնող
շաբաթներու, ամիսներու, տարիներու
միօրինակ անհամբերութեան: Ու կը հաւա-
տամ որ շատ աղէկ ընտրեցիր «սիրուած
էակ»ը, և կը բարեմաղթեմ սրտիս ամէնէն
անկեղծ եռանդով որ կեանքի բեռը թեւ-
չունի մը թեթեւութեամբ թափի ձեր ու-
սին վրայ:

Տէրը, որ իր գաւառներուն երջանկու-
թիւնը կ'ուզէ, հիմնած է ամուսնութիւ-
նը, որպէս զի իր գաւառները անոր քաղց-
րութիւններուն մէջ մոռնան թէ աշխարհ
արցունքներու ձոր մըն է միայն:

Երեկ-կինկ մը որ իրար գտած են, կը
նմանին զոյգ մը երջանիկ տատարակներու:
Խնդրել միայն իրար գտնուելու մէջն է, կը
մաղթեմ որ այդ երջանիկ տատարակներ
ըլլաք դուք:

Մի՛ հաւատաք թէ ամուսնութիւնը
դժբաղդութեանց սկզբնաւորութիւնն է և
թէ կարգուելու խենդութիւն մը կը նշա-
նակէ:

Ասիկա չափազանց եսամոլ ամուսնի-
րու խորհրդակցեցն է միայն: Գիտցէ՛ք որ
այդ ամուսնիները մեծագոյն գեանաքար
վատերն են, որոնք կեանքէն կը վախնան,
անոր առջեւ կը փախին դողալով և անոր
պատասխանատուութիւններն են որ կը
սարսափեցնեն զիրենք:

Օ՛հ, մի՛ վախնաք կեանքէ:

Աստուած որ երկնքի թռչուններուն
կեանքը կը հոգայ և գետնի մըջիւնները
կը պատսպարէ, անշուշտ իր գաւառները
աւելի՛ կը մտածէ:

Չեմ կարծեր որ շատախօսած ըլլամ,
և եթէ շատախօսեցի, ներէ՛: Մտածածս
միայն ըսի:

Իշպու զաւ Տ. Գ. Թօլայեան Թարս
Ֆրնտան կիւզէլ սուրէթօտ Թէրթիպ
տիւմիշ օլուպ, Պէյօլլուունն քեաֆֆ
միւզիգաճը տիւքքեանլարնտա սաթ
մագտաւ սրր :

